ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
29.11.2024 Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք. Երևան

2024 թվականի նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ Արամայիս Փաշինյանը, Մարիամ Գալստյանը և Լիլիթ Ալեքսանյանը: Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

Օրակարգ

1. Պետական ֆինանսավորման ենթակա՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Բարգավաճ Հայաստան», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Վերածնվող Հայաստան» և «Հանրապետություն» կուսակցությունների՝ 2023 թվականի տարեկան հաշվետվությունների

ստուգման արդյունքում պետական նպատակային ֆինանսավորում տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին որոշման նախագծերի քննարկում:

Հայտարարագրերի վերլուծության վարչության Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի կողմից Հանձնաժողովի քննարկմանը ներկայացված որոշումների նախագծերի քննարկման արդյունքում, Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին և 14-րդ մասերով և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 26-րդ հոդվածի 11-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑ

1. «Հանրապետություն» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առկա են հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման կեսը: Նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝ առկա են հիմքեր կուսակցությանը տրամադրել պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը:
2. «Վերածնվող Հայաստան» կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առկա չեն հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման կեսը: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ առկա չեն հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը: Նույն հոդվածի 9-րդ մասի

համաձայն՝ առկա են հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը:

3. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության 2023 թվականի Տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առկա չեն հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման կեսը: Նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝ առկա են հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը:
4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության 2023 թվականի Տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերի համաձայն՝ առկա են հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը:
5. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2023 թվականի Տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով առկա չեն հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման կեսը: Նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝ առկա են հիմքեր կուսակցությանը տրամադրելու պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը:
6. Ինչ վերաբերում է պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործմանը, ապա ղեկավարվելով Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 11-րդ մասով՝ իրականացվել է համապատասխան ստուգում, որի վերաբերյալ Հանձնաժողովի արձանագրումները ներկայացվել են Կուսակցությանը: Այս առումով անհրաժեշտ է արձանագրել, որ «««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» սահմանադրական օրենքի հոդված 1-ին ով սահմանվել է, որ *««««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և*

փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասում «Կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 թվականի համար» բառերը փոխարինել «Կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 և 2023 թվականների համար» բառերով:», ինչպիսի պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքները չեն կարող ազդել Կուսակցությանը 2023 թվականի համար տրամադրված պետական նպատակային ֆինանսավորման միջոցներից վրա, քանի որ վերոնշյալ կարգավորմամբ կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 և 2023 թվականների համար տրամադրվել է ամբողջությամբ՝ առանց Օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված պահանջների ապահովման:

7. Սույն որոշումներն (կցվում են) ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, դրանց մասին իրազեկել համապատասխան կուսակցություններին, ինչպես նաև ՀՀ կառավարությանը:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ **ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**